

խանձելի էր: Մայրեր ձեռքերնուն վրայ
կը բարձրացնէին իրենց փոքրիկ զաւակ-
ները, որպէս զի տեսնան այս փոքրիկ
Հրեշտակին մեռած մարմինը. և այն պըզ-
տիկ և փափուկ տղաքները փոխանակ
փախչելու այս երկիւղալի տեսարանէն,
կ'երկնցնէին իրենց փափուկ ձեռքերը զին-
քը զրկելու համար:

Բաւական երկար ժամանակ տեսնուե-
ցաւ Մոնթէ — Մարիայի մատրան պզտի
գերեզմանատան մէջ այն տեղը ուր որ
թաղուած էր այս պզտիկ կոյսը, և որ
ուրիշ տեղերէ աւելի կանաչագեղ էր, և
ամէն օր նոր ծաղիկներով կը զարդա-
րուէր տղայոց ձեռքով. և թէ այս գիւ-
ղացիներէն մէկուն հարցնէիր թէ ո՞վ թա-
ղուած է այս տեղոյս մէջ, ամէնը քցի
պիտի պատասխանէին զարմանալի կեր-
պով մը. «Հոս կը հանգչի Մարիամ». ի-
բրեւ թէ աշխարհիս վրայ Մարիամ անու-
նով ուրիշ անձ մը եղած չլիւար:

Շատ տարիներ վերջ կը նշամրուէին
այն տեղւոյն մօտ, ուր թաղուած էր խեղճ
Մարիամը, ուրիշ երկու գերեզմաններ ալ.
և ասոնք իւր ծնողաց գերեզմաններն էին,
զորս ամէնը կը պատուէին իրենց յար-
գելի ծերութեան և ատաքինութեանց հա-
մար. Ռիչերոյ ուզեց որ իւր մահուրնէ
վերջ պատմուի թէ ինչպէս իր ատաքի-
նութիւնը, երջանկութիւնը, յանցանքնե-
րը, պատիժը, իւր զղիւմը և ներումը
սքանչելապէս յարաբերութեան մէջ եղաւ
միշտ Մատրան կանթեղին հետ:

ՔԱՐՏ. ՎԱՅՁՄԱՆ

— Տրամաբանութիւնը ամէն անգամ յաղթա-
կան չէ աշխարհիս մէջ, և խիստ քիչ անգամ՝
քաղաքական ժողովներու մէջ:

Մ. ՄԻՆԿԷԿԻ

— Բնութիւնը չգործեր շատով ինչ որ կրնայ
գործել քիչով:

Գ. ԳԱԼԻԼԵԻ

— Աշխարհս առաջ չերթար գոհերով, ոչ ա-
ռաջ կ'երթայ տգոհներով:

Յ. ՄԱՐԻՈՂԻ

ՀԱՅՐ ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ

(ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ)

(Բազմ. 1915 էջ 75).

III

ԱՌԾԻԾԱՌՆ

(ՏՆՍ ԴՈԱՐՑ, Հատոր Ե. Տխրուի, Բանք Պանդուխտ, ԺԱ.)

Միծառնիկ, զարնան թռչնիկ, պանդուխտ
սրտերու մտերմիկ, մթամած բանտերու
լուսամտտին երգիչը քաղցրիկ, որ Ապ-
րիլի զեփիւռներուն հետ կը փախչիս
զուարթ ու թեթեւ՝ ձորէ ձոր ծաղկազուարճ,
բլուրէ բլուր ալեծաղիկ ու ծառէ ծառ
զալարագեղ, ինչ կը բերես ինծի, հէք
պանդուխտ, այս օտար երկնքին տակ՝ ուր
հայրենաբաղձ հոգիս ի գութ կը փնտռէ
շունչը զարնան հայրենեաց, երբ դաշտեր
կը լեցուին ալիքով վարուխտ, երբ ջուրեր
արծաթալիք ու քաղցրակարկաչ կը խոն-
դան արեւուն ծիրանի, և հոյլն ոսկեթեւ
մեղուաց կը թառի ծաղիկներու բաժակին
մեղրածոր, ու կեանքն անոյշ կը զարթ-
նու, իբրեւ դիցուհի չնաշխարհիկ, ու կը
զգենու լոյս, այն լոյսն օրհնեալ ու ջեր-
միկ՝ հայրենեաց վարդամատիկ արշալոյ-
սին: Ո՛հ, սիրտ իմ կարօտահար, տխրու-
թեամբ կը լեցուիս, սիրտ իմ, կտորած
սափոր ու ջախջախեալ ծաղկառօթ, —
քնար իմ ցաւատանջ, «կը մըմնջես մը-
տերմաց, կը հառաչես հայրենեաց», քնար
իմ, կորած մեղեդի և անծանօթ եղանակ...

Հայրենիք ու մտերմութիւն, աստուա-
ծային և անթառամ ծաղկունք մարդկու-
թեան, ո՛ր տայր ըլլայի՞ք ինկարոյր դարէ
դար ու չի վերածնէիք իբրեւ ցաւագին յի-
շատակներ կուրծքիս տակ արինոտ... Բայց
դուն կը թռչիս, կը հեռանաս կապոյտին
մէջ երկնից, զուարթ վարժմանիկ, և իմ
սաշքերս նուաղկոտ և արտասուտգին կը
հետեւին քցի, հոգի՛դ հայրենեաց, ծիծառ-
նի՛կ:

Գարունը դրանց աւետամուտ հրեշտակիկ,
Պանդուխտս՝ ողջոյն տամ քեզ, պանդուխտ
ծիծառնիկ.

Հրեշտակ ասեմ, թէպէտ եւ սեաւ ես ի
գոյն,

Այլ պանդրխտի կայց՝ քան զայն լուսա-
գոյն.

Մինչ յօրացեալ ի հայրենիսն իմ էի

Հարևանցիկ աշօք ընդ քեզ հայէի.

Շրտայլ ունկամբ ես խնդրէի միշտ սոխակ,

Շրտայլ աշօք՝ միշտ դեղձանիկ եւ թուփակ.

Ոքսորս ուղղէ զմեզս արդ աչացս եւ սրտիս.

Ծիծառն, ազնիւ իբր ըզքեզ, չի՞ք պան-
դրխտիս:

Մտերիմ չէի՛ր իմ սրտիս, երբ հայրե-
նեաց գրկին մէջ կը սահէր մանկունազեղ
տարիքս, թէ եւ ամէն տարի կու գայիր
մեր երդիքին տակ ու խնդագին կ'ողջու-
նէիր գարունը, բայց ես աւելի կը սիրէի
լեւն գեղգեղանքը սոխակին, աւելի կ'ու-
զէի տեսնել դեղձանիկն ոսկի՝ քան զքեզ...
բայց հիմա, դո՛ւն ես մտերիմը սրտիս,
երկուքիս ցաւը մէկ է ու վշտին եղբայ-
րութիւնը ոսկիէ շղթայի նման մեր հոգի-
ներուն միջեւ կը ձգուի. ո՛հ, ծիծառնիկ,
տիեզերքին մէջ չի կայ այնքան քաղցր
երջանկութիւն որքան մտերմութիւնը եր-
կու ցաւատանջ հոգիներու, երկու անմիտ-
թար սրտերու...

Ջուգաբաղդիկ մեք թափառիմք յերկրի
աստ,

Ես անթեւ, դու թեւօք պարզեալ առագաստ՝
ի հայրենեաց խընդիր յուղումջ անհան-
գիստ.

Այլ իմ վիճակըն քան ըզքոյդ շատ է խիստ:

Երկուքս ալ հայրենիք մը կը փնտռենք,
բայց դուն շուտով կը գտնես, իմ ցաւս
աւելի մեծ է քան քուդդ, —

Դու յարաշու՝ յար ե հնարես հայրենիս,
Համհարզ գարնան՝ ուր ե ծաղիկ՝ անդ
թառնիս.

Ձամառ ձմեռոն դանակեալ ի մի լար՝
Դու հանապազ երգես ըզսէրն դալար.

Որովհետեւ դուն պիտի գտնես բոյն մը
եւ անոր ջերմիկ ծոցին մէջ պիտի վերբու-
կըսիս կեանք մը սիրալիր ու ծաղկաւետ,
հո՛ն՝ ուր լոյսին կը բանան իրենց աչքերն
անոյ՝ «դստերքն առաւօտու», քեզի հա-
մար գարուն մը պիտի ծաղկի, եւ դուն
դարձեալ պիտի երգես դուստրը դեռատի,
խնդութիւնը կեանքին, արշալոյսի ծաղիկ...

Բայց

Ես յետս ընդդէմ ի հարաւոյ առ հիւսիս,
ի ծաղկանեմ վայրաց՝ անկեալ յամայիս,
իբր յարեւելս՝ յիմ հայրենեացն յառեալ
կոյս՝

Լամ առաջի ՝ մ երեալ զգարձիս դանդաղ
յոյս:

Ձէ՛, մի՛ աճապարեր թռչիլ, քիչ մ'ալ
կեցիր խցիկիս պատուհանին քովիկը.

Արդ դու յիմոցս հասեալ վայրաց անձկա-
լեաց,

Ասա՛, ծիծառն, ի՛նչ ողջոյն իմ հայրենեաց...

Ըսէ՛, ի՛նչ բերիք ինծի, արդեօք թեւերդ,
ծիծառնի՛կ, մոխիրո՞վ ծածկուած էին, երբ
դուն սլացար արագընթաց ու թողուցիր
իմ հայրենիքս...

Բայց ո՛չ, մի՛ ըսեր, դուն կ'ուզես թրու-
չի՛լ, բարձրանա՛լ եթերաց կապոյտին մէջ
վճիռ եւ լուսազեղ, ձայն տալ ընկերներուդ
ուրախ երգելով.

Ո՛հ, մի՛, մ'ասեր, լուռ լն՛ր, ըզսիրտ իմ
կտրես,

Չեմք զուգաբաղդք, զի ես տրտում, դո՛ւ
'րախ ես.

Ի դարձ հողմոյն դարձեալ դիմես դո՛ւն՝դ
հարաւ,

Ես յատլանդեան ափունս՝ հալեմ գաչս
անձկաւ:

Կարծեցի որ դուն մտերիմ պիտի ըլլաս
ինծի, բայց հիմա կը հասկնամ, աւաղ,
դուն ցաւ չունիս ինծի պէս. իմ վէրքս
դեռ կ'արիւնի եւ աչքերս կը լեցուին ար-
ցունքով:

Գնահ, թո՛ր, աշտարակներու, բեր-
դերու, բանտերու թռչնի՛կ, քեզ սպասող
կարօտանազ սրտեր կան, գնահ, թերևս ա-
նոնց ողջո՛յն մ'ունիս բերած, իսկ ինծի
համար բան մը չունիս... Ելանի՛ր թէ չի
մոռնայիր իմ արցունքէն կաթիլ մը տա-
նելու անտերունչ դաշտերուս և ըսէ՛ր
հոն բացուող ծաղիկներուն թէ իրենց պան-
դուխտ մշակը դրկած է զայն...

Իցի՛ն թևիկ թացեալ յարտօր իմ անմոռնչ՝
կաթէ՛ր կաթ մ'յիմ ազարակն անտերունչ,
Եւ ասէ՛ր, ծաղկո՛ւնք ծընգեալք, զայս
ցօղ՝ ձեզ

Առաքէ՛ ձեր պանդուխտ մըշակն աղէկէզ...
Այլ հաս հիւսիս. ծիծառն՝ ե՛լ զհետ գար-
նայնոյն.

Անյոյս յերկրէ՛ ես սպասեցիք երկնայնոյն:

Անյոյս և անտերունչ ես պիտի սպա-
սեմ օտարութեան մէջ մինչև որ մահուան
ցուրտ պսակը իմ ալեգարդ նակտիս շուրջը
կապեն փառքն ու հանճարը, որովհետեւ,
ծիծառնի՛կ, քեզ նման երգեցիկ ոգի մ'եմ
ես, քեզ նման հոգի՛ հայրենեաց, անոր
մշակը՝ յոգնած ու տկար նահապետ:

Գնահ, ալ մի՛ սպասեր, գարնան հետ
թո՛ր հոն, իմ հայրենեաց գիրկը, ու վե-
րադարձիր, թռչնի՛կ իմ սիրուն, իցի՛ն թէ
չի մոռնայիր իմ գերեզմանս, որովհետեւ
զոց պիտի գտնես խցիկիս պատուհանը...
Կոտցիդ ծայրը շիւղ մ'ունենայիր հայրե-
նեացս դափնիներէն, կաթիլ մ'արցունք,
խօսքը Յոյսին, կաթիլ մ'արիւն, խօսքն
Ազատութեան, կաթիլ մը ցօղ,՝ Ժպիտն և
լոյսը հայրենեաց վարդամատիկ արշալոյ-
սին...

ԱՐՄԷՆ-ԵՐԿԱՔ

(Անտիպ)

— Հասարակաց կարծիքը ծաղրական հայելի
մ'է, որ իրերը երբեմն մեծ և երբեմն փոքր և
միշտ՝ ծուռ կը ցուցնէ:

Յ. Յ. ՄՈՒՐ

ՀԱՄԱՀԱՅՆՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՒ

ԱՍՏԵՂԱԲԱՐՇԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐՈՒ

○ ○ ○

(Տես Քաղմ. 1915 էջ 188)

Քաղաքական տարին համարեցանք
364օր, մինչ արևադարձային միջին տա-
րին ներկայիս է 365օր, 24 216 466, ու-
րեմի քաղաքական տարին պակաս է 1օր,
24 216 466օրդ չափով:

Միջին տարի, ըսինք, վասն զի տարւոյ
երկարութիւնը հաստատուն չէ, այլ 38
երկվայրկեանի չափ կը նուազի կամ կ'ա-
ռաւելու միջին տեղութեան շուրջը: Այս
միջին տարւոյն երկայնութիւնը 2360 օրդ
տարւոյն պիտի պատահի: Արդ գիտենք որ
ըստ Պ. Լէվերիէի, արևադարձային տա-
րին կը նուազի ամէն հարիւր տարւոյ շըր-
ջանին՝ Օմ, 539 քանակութեամբ: Այս
հաշուով 2360 երորդ տարւոյն երկայնու-
թիւնը պիտ'ըլլայ 365օր, 24 216 466:
Ուրեմն այս միջին տեղութիւնը մենք կըր-
նանք իբր խարխիս առնուլ մեր հաշուոց հա-
մար: Անգամ մը որ գտանք արևադար-
ձային միջին տարին, կրնանք ասով հա-
մաձայնութեան մէջ զննել քաղաքական և
աստեղաբաշխական տարիներն:

Տեսանք թէ քաղաքական և աստեղա-
բաշխական տարիներու տարբերութիւնն է
1օր, 24 216 466, կ'ըսեմ թէ 17 տարի-
ներու և 16 տարիներու փոքրիկ պարբե-
րականները կապ պիտ'ըլլան վերոյիշեալ
երկու տումարներու: Վասն զի 17 անգամ
մնացորդն 1օր, 24 216 466 մեզի պիտի
եռայ արտադրեալ մը՝ որ է 21օր, 11 679
922, ըսել է թէ 17 տարուան մէջ քա-
ղաքական տարին 21օր, 11 679 922 ետ
պիտի մնայ, ուստի եթէ 21 պակաս օրերուն
տեղ նահանջներն զնենք՝ երկու տումար-
ներն համաձայնութեան կրնանք բերել:

Արդ այս 17 տարիներու պարբերական
շրջանին մէջ երեք լրացուցիչ տարիներ
կը ձևանան իւրաքանչիւրը 7ական օրերէ
և այն տարին որուն վրայ պիտի աւել-